# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 29/10-Լ «14» 02 2022

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով և ռեկտորի թիվ 27/83-Լ հրամանով հաստատված «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 7-րդ կետով՝

հրամայում եմ

Ա) Յուրաքանչյուր անվանակարգի համար ստեղծել «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակի» համակարգող հանձնաժողովներ հետևյալ կազմերով՝

**Ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների անվանակարգ՝**

1. Բարխուդարյան Ռաֆայել-գիտական հարցերի գծով պրոռեկտոր, (հանձնաժողովի նախագահ),
2. Հախումյան Արսեն-Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի պրոֆեսոր,
3. Մուրադյան Ատոմ-Ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ,
4. Սահակյան Արթուր-Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան,
5. Չուբարյան Անահիտ-Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր:

**Բնագիտական մասնագիտությունների անվանակարգ՝**

1. Բարխուդարյան Ռաֆայել-գիտական հարցերի գծով պրոռեկտոր, (հանձնաժողովի նախագահ),
2. Սուվարյան Սեյրան-Սերվիսի ամբիոնի վարիչ,
3. Դուրգարյան Նարինե-Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ,
4. Փանոսյան Հովիկ-Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ,
5. Հովհաննիսյան Անահիտ-Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ:

**Բանասիրական մասնագիտությունների անվանակարգ՝**

1. Ասրիյան Էլինա-ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր,
2. (հանձնաժողովի նախագահ)
3. Գասպարյան Սեդա-Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ,
4. Դիլբարյան Նարինե-Հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ,
5. Գազարովա Դիանա-Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի դոցենտ,
6. Պողոսյան Նաիրա-Թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ,
7. Պետրոսյան Դավիթ-Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ:

**Հասարակագիտական մասնագիտությունների անվանակարգ՝**

1. Ասրիյան Էլինա-ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր,
1. (հանձնաժողովի նախագահ)
2. Ալեքսանյան Աշոտ-Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
3. Ավանեսյան Հրանտ-Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ,
4. Եղիազարյան Արման-Սփյուռքագիտության ամբիոնի վարիչ,
5. Սահակյան Անահիտ-Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,
6. Խաչատրյան Կառլեն-Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ,
7. Հայկյանց Արմեն-Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

Բ) Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժ/պ-ի 20/12/2019թ. թիվ 238/30 հրամանը:
Գ) Սույն հրամանի մասին տեղեկացնել հանձնաժողովների անդամներին:

ՌԵԿՏՈՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

## «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակի» համակարգող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր լիազորություններն իրականացնելիս գործում է Երևանի պետական համալսարանի ռեկտորի 10.02.2022թ. թիվ 27/83-Լ հրամանին և սույն աշխատակարգին համապատասխան:
2. Թեկնածուների առաջադրման, մրցանակակրի ընտրության և այլ կազմակերպական աշխատանքների կատարման նպատակով հանձնաժողովը հրավիրում է նիստեր: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
3. Մրցույթի արդյունքներով հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
   ա) մրցանակակիր ճանաչելու և մրցանակը շնորհելու մասին,
   բ) մրցույթը չկայացած համարելու մասին,
   գ) մրցանակակիր չճանաչելու մասին:
4. Մրցանակակիրների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը ենթակա չեն հրապարակման:
5. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ ժամ առաջ: Հանձնաժողովի նիստերի հրավիրման մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ: Հանձնաժողովի որոշմամբ կազմվում է տվյալ նիստի արձանագրությունը:
6. Հանձնաժողովը դասալսումներն իրականացնում է մրցույթին մասնակցող թեկնածուի համար չնախատեսված կերպով: Հանձնաժողովը կարող է որոշում

ընդունել տվյալ դասալսմանը փորձագետներ ներգրավելու մասին: Դասալսումները և դրանց վերլուծությունը տեղի են ունենում ըստ հավելված 1-ում ներկայացված դասի գնահատման հարցաթերթի և դասալսման արդյունքների:

7. Թեկնածուները գնահատվում են 100 միավորանոց համակարգով՝ ներկայացված չափանիշներին համապատասխան

Աղյուսակ 1.

| *Գնահատման չափանիշներ* | *Միավոր* |
|---|---|
| Թեկնածուների ուսանողների գնահատականներ | 20% |
| Ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում | 30% |
| Դասալսումներ | 30% |
| Ուսումնամեթոդական ձեռնարկներ | 20% |

Հավելված 1

# ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Դասախոս _____

Դասընթացի անվանումը _____

Ուս.տարի

_____

Դասալսող/-ներ/ _____ _____

Ուսանողների քանակ _____ Ամսաթիվ ___/___/_____

Գնահատման սանդղակ

4— իրականացվել է գերազանց

3— իրականացվել է լավ

2— իրականացվել է որոշակիորեն

1— իրականացվել է ոչ այդքան լավ

0— չի դիտվել/դժվար է գնահատել

| | Դիտման ասպեկտները | Գնահատական | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *1. Նախաբան և կողմնորոշում* | | | | | |
| 1. | Բացատրում է նյութի նպատակն ու խնդիրները | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 2. | Ներկայացնում է նախորդ նյութի հետ կապը | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 3. | Բացատրում է առարկայի մեջ տվյալ նյութի տեղը | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| | 2. *Ուսանողների ներգրավվածություն* | | | | | |
| 4. | Հարց է տալիս և սպասում պատասխանի | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 5. | Համակարգում և ուղղորդում է քննարկումը | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 6. | Առաջարկում է ուսանողներին մասնակցել հարցի քննարկմանը | 4 | 3 | 2 | 1 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *3. Վերաբերմունք* | | | | | |
| 7. | Ոգևորված է առարկայով | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 8. | Ուսանողների մոտ հետաքրքրություն է առաջացնում առարկայի հանդեպ | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 9. | Ուսանողների հետ կապն անմիջական է և հարգալից | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| | *4. Դասավանդման մեթոդ* | | | | | |
| 10. | Օգտագործում է տեսա-ձայնագրված նյութ (օր.՝ Power Point), ուսումնաօժանդակ նյութեր, սարքեր | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 11. | Կիրառում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց շնորհիվ հասնում է իր նպատակին | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 12. | Շեշտադրում է նյութի հատվածների միջև անցումները | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 13. | Շեշտադրում է գլխավորը, հիմնարարը | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 14. | Բացատրում է հստակ և համոզիչ | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 15. | Կիրառում է կոնկրետ և պրակտիկ օրինակներ | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 16. | Կիրառված դասավանդման մեթոդները թույլ են տալիս հասնել դասի նպատակներին | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 17. | Ունի ձևավորված խոսքի մշակույթ | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| | *5. Ամփոփում* | | | | | |
| 18. | Դասն ամփոփում է և անում եզրահանգումներ | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 19. | Պատասխանում է հարցերին | 4 | 3 | 2 | 1 | 0 |
| 20. | Լսարան է մտնում և դասն ավարտում է ժամանակին | 4 | 3 | 2 | 1 | 0 |

Լրացուցիչ մեկնաբանություններ

_____

_____

_____

_____